աստուածային երկիւղին, իրաւանց և դատաստանի նորա։ Ապա ետ կապել 'ի ծայր նիզակի զկտաւս պատանաց իւրոց, և 'ի ձեռն մուներակի շուրջ ածել 'ի հրապարակս քաղաքին. «Սալահատտին, որ տիրեաց Ասիոյ, եւ արժանի եղեւ այսչափ փառաց և մեծութեան, զսոյն եւ եթ պատանս տանի ընդ իւր, եւ պակասեցաւ 'ի կենաց 'ի հասակի 57 ամաց 'ի 27 Սեպտեմբեր ամսոյ. ՈԼԶ (1193), և թաղեցաւ անդ 'ի Դամասկոս, կացեալ յիշխանութեան ամս 25։

Ի սմին ամի պատահեցաւ դարձեալ այլայլութիւն Զատկի, որ ասի ծառազատիկ, որպէս պատահէր յառաջագոյն, և եղեւ վեհ ընդ Ցունաց յԵրուսաղէմ և յայլ քաղաքս եւ 'ի Կիւլիկիա. (1197)։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Բաժանումն թագաւորութեան յորդիս Սալահատտինի։ Պատերազմ Լատինաց ընդ Մէլիք Ադիլայ։ Պաշարումն Տիմիաթի։ Քանդումն պարսպին Երուսաղէմի։ Զօրանալ Լատինաց 'ի կողմանս Եգիպտոսի. դաշինք նոցին։ Թագաւորն Սիկիլիոյ, տիրել նորին քաղաքին Երուսաղէմի։

ՍԱԼԱՀԱՏՏԻՆ եթող զկնի իւր զորդիս 17. անդրանիկն Մէլիք Աֆտալ կալաւ զիշխանութիւնն Դամասկոսի՝ ըստ կտակի հօր իւրոյ. Մէլիք Ազիզ, Եգիպտոսի. Մէլիք Զահր, Բերիոյ. իսկ եղբայր նորին Մէլիք Ատիլ, Քերեքի Շովպէքայ և արեւելեան քաղաքաց. եւ այլք իշխեցին այլոց կողմանց։ Յետ բաժանելոյ սոցա զտէրութիւնն 'ի միջի իւրեանց և անցանելոյ չորից ամաց, երեւեցան դարձեալ Լատինք 'ի կողմանս Ասորեաց, և պաշարեալ առին զամրոցն Պէրութի։ Թէպէտ և եհաս անդր Մէլիք Ատիլ, բայց չկարացեալ առնել ինչ, դարձաւ 'ի վերայ Յոպպէի, եւ 'ի սուր հանեալ զպահապան զօրսն տիրեաց քաղաքին, և անտի դիմեաց 'ի Դիսպնին, ուր ժողովեալ էին Լատինք, եւ ստիպեաց զնոսա դառնալ 'ի Տիւրոս։ Սակայն նոքա կազմ և պատրաստ յանկարծ երեւեցան 'ի լերինս Սամարիոյ՝ յարձակիլ անտի 'ի վերայ քաղաքին սրբոյ։ Հասեալ